Երբեմն նաև չաչ կրնան ըլլալ տերևք և պտուղք խակ, երբ հողուն դաշխին, տալով սրմուտ և պտկունք։

Պատուաստն գրոյս բազմացրնելու այն կերպն է՝ որով բուսոյ մը պտուղ ունեցող ճիւղ մը կը միացուի ուրիշ բուսոյ ճիւղի մը հետ, որպէս զի միւս բուսոյ սնունդն առնու և աճի. (Ձև 153)։ Երեք տեսակ պատուաստ կայ Կեղևապատրոյս, Ճղապատրոյս և Պատուաստ մերձաւորութեամբ։

Կեղևապատրոյս կ'ըլլայ՝ երբ ենթակային կեղևին մաս մը կտրուի, և տեղը դրուի հաւասար մեծութեամբ պատուաստելի բոյսը, որ պէտք է մեծ աչք մ'ունենայ, (Ձև 154)։

Ճղապատրոյս կ'ըլլայ՝ երբ պատուաստի վրայ կ'առնըցուի պտուկ ունեցող ճիւղ մը, որուն վարի ծայրը երկթի պէս սրած, (Ձև 72) կը խոթուի հերձուած ցօղունի մը մէջ, ջանալով որ թէ՛ ենթակային և թէ՛ պատուաստին կեղևային եզերքներն ամենաճիշտ կերպով զիրար շօշափեն. (Ձև 155)։

Մերձաւորութեամբ պատուաստ կ'ըլլայ՝ երբ երկու ճիւղ, կամ երկու տունկ իրարու մօտեցընենք և ուժով կապենք, շօշափման տեղը կեղևին հանելով։

Այս երեք տեսակ Պատուաստքն յաջողելու համար՝ պէտք է նախ որ ընդ մէջ ենթակայի և պատուաստի՝ յարաբերութիւն մը ըլլայ. երկրորդ՝ որ թէ՛ ենթական և թէ պատուաստը մի և նոյն եղանակի բոյսեր ըլլան. երրորդ՝ որ շօշափումն ենթակայի և պատուաստին՝ ամենաճիշտ ըլլայ, ինչպէս նաև հատումներն ալ. չորրորդ՝ պէտք է պաշտպանել բուն պատշաճի օդէն, ցրտէն և սաստիկ տաքէն։

Կը շարունակուի։

---

# ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

### ԱՆԵՓ ՀԱՒԿԻԹՆԵՐՈՒ ՎՆԱՍՆ

Սովորաբար կը կարծուի որ չեփած կամ չխաշած հաւկիթն հում հում ծըծելով առողջութեան օգտակար ըլլայ. սակայն այսպիսի սովորութիւն ունեցող մէկն, մինչդեռ ծծելու կը պատրաստէր հաւկիթ մը, դեղնուցին մէջ նշմարեց ամենափոքրիկ սև բիծ մը. և հաւկիթը խոշորացուցի տակ դնելով յայտնի եղաւ որ այն սև բիծն՝ խառնակ որովայնի կամ մեծաւոր որդն ըսուած տեսակէն ամենափոքրիկ զեռուն մ'էր։ — Շատ անգամ՝ գիտողութեան նիւթ եղած է՝ որ ձուոց մէջ կը գտնուին երբեմն եռկբերանի ըսուած որդերէն, ինչպէս նաև նոյներն կը գտնուին հաւերուն աղեաց մէջ։ — Ուստի լաւագոյն է միշտ հաւկիթները տապակած կամ խորոված և կամ որ և իցէ կերպով եփած ուտել, եթէ կ'ուզենք մեր մարմնոյն մէջ տաղտկացուցիչ հիւր մ'ընդունելու վտանգէն և անոր պատճառելիք վշտերէն ազատիլ։

### ԱԽՏԵՐՈՒ ԴԷՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Վերջերս Ամերիկայի մէջ կազմուեցաւ ընկերութիւն մը՝ զախտս ջնջելու նպատակաւ, որոյ անցեալ տարուան հրատարակած հաշուետետրն՝ հետեւեալ ծանօթութիւնները կը բովանդակէ։

Առաքինութեանց պաշտպան ընկերութիւնն մինչև ցայժմ ջնջած է 25,564 բարոյականի վնասակար գրքեր, անթիւ անպարկեշտ փորագրութիւններ, 147 անձինք բանտարկել տուած է՝ անհամեստ հրատարակութիւններ ընթերցած լինելուն պատճառաւ, 500,510 ֆռանգ տուգանք առած է նմանօրինակ զիպաց համար, ջնջած է 1,316,088 անառակ երգեր. հուսկ ուրեմն գրաւած է բազմաթիւ առարկաներ, արձանիկներ, զորս ապականիչ բարուց գտած է։ — Ընկերութիւնս կազմեալ է գլխաւորապէս յամերիկեան օրիորդներէ. որոց դժուարին պաշտպանմանն 'ի սրտէ կը մաղթենք յաջողութիւն։

digitised by A.R.A.R.@